

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ֆ. Գ.

Պատերազմեն վերջ Յազկերտ արքային ընթացքը. — Բակ զօրավարին փախադորձութիւնը. — Ասորմիզդ մարզպանին զօրձութիւնը. — Վասակին դասապարտութիւնը. — Հայ նախարարներուն եւ Հայ եկեղեցականներուն Տիգրանի մէջ դասավարտութիւնը. — Անոնց ախորը եւ Հայ եկեղեցականներուն նահապետութիւնը. — Եզրակացութիւնը:

Մուշկան Նիւսաւաւուրտ, Պարսից բանակին ընդհանուր հրամանատարը, Աւարայրի ճակատամարտէն վերջ, մասնաւոր տեղեկագրով մը պատերազմին արդիւնքը խմացուց Յազկերտ արքային: Յազկերտ արքան, երբ տեղեկացաւ պատերազմին մէջ եղած իրադարձութիւնները եւ երկու կողմանց կորուստները, ի խոր խոցեցաւ, երբ լսեց «լաւ արանց» զօրավարներուն անունները, ի մասնաւորի երբ լսեց Բաջն Վարդան Մամիկոնեանի մահը շատ ցաւեցաւ «յահաւոր սուգ ընկղմեալ խռովէր» (Փար. 73):

Է. Յեղանակին մէջ ուշադրութեան արժանի է, Պարսիկներու կողմէն պաշարուած բերդի մը յուսահատ վիճակը: Բակ անունով Հայ քաջամարտիկ եւ անվերջ զօրավար մը, զիշերը, իր եօթը հարիւր քաջերով կը յաջողի բերդէն փախչիլ եւ ազատուի իրեն զօրքերովը հանդերձ: Իսկ ուրիշ վայրերու մէջ, ժողովուրդը երկիւղի եւ յուսահատութեան մէջ կը տուայտէր: Ասով հանդերձ, Հայ ժողովուրդը այս մեծ տաղնապին մէջ իրեն կրօնական եւ բարոյական կորովը պահեց: Եղիշէ այսպէս կ'ըսէ անոնց մասին «Սաղմոս էին նոցա մրմունջք երգոց, եւ ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք»: Ամէն ոք, իր մէջ կը զգար նուիրուելու զհոգութիւնը

«ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան, եւ ողիք նոցունց պատարագ ընդունելիւ: Հայոց զօրքերուն զաւով, բոլորն ալ ցրուեցան ասդին անդին: Ոմանք խաղտեաց զաւառը, ոմանք՝ Տմորեաց զաւառը, իսկ ոմանք ալ Արցախի անմատոյց եւ դժուարամուտ կիրճերուն, ամրոցներուն եւ բերդերուն մէջ ամրացան:

Յազկերտ հրաման արձակեց եւ Մուշկան Նիւսաւաւուրտը իր բանակովը միասին երկիր վերադառնալ հրամայեց: Յազկերտ արքան, Միհրնեսրսէի խորհուրդով, Հայաստանի մարզպանութիւնը Ատորմիզդ անունով մէկու մը յանձնեց, յիշեալին տոհմանունը չէ յիշուած: Յազկերտ արքան, իր տուած հրովարտակովը, նոր նշանակուած մարզպանին կարի զգուշութիւն կը յանձնարարէր, որպէսզի՝ բոլորը սիրով նուաճեր եւ քրիստոնէութեան կրօնքին վերստին ազատ պաշտուիլը կը հրամայէր «զպաշտօն քրիստոնէութեան համարձակապէս ունել ամենեցուն»:

Յազկերտ արքային հրովարտակին համաձայն, Ատորմիզդ նորմարզպանը Պարսկա-Հայաստանի ամէն կողմերը խաղաղութեան համար թուղթեր եւ չրջաբերականներ գրեց, որոնց մէջ ասդին անդին ցրուած փախստականները իրենց տունները վերադառնալ հրամայեց, աւետելով իրենց թէ յետ այնու բոլորն ալ պիտի կրնային քրիստոնէութիւնը պաշտել ամէն տեղ: Յազկերտ արքայէն առած հրամանին համաձայն, փախստական եւ ապստամբ Հայ նախարարներուն մասնաւոր թուղթեր գրեց, որոնք անմատոյց բերդերու եւ բարձրութիւններու վրայ ամրացած կը մնային: Բոլորին վստահութիւն եւ յոյս կուտար երգ՝ մամը թէ՛ «զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, եւ զպաշտօն քրիստոնէութեան համարձակապէս ունել ամենեցուն» (Փար. 73):

Ատորմիզդ մարզպան Հայ նախարարները դէպի արքունիք գրկեց հոն դատուելու համար:

Այդ իշխաններն ու նախարարներն էին.

1. Միհրապաւն Արծրունի.
2. Իւխան Ամասունի.
3. Արշալիւր Արարունի.
4. Շմաւոն Անանեացի.

5. Փափագ Առաքելեան .
6. Վրէն Sauerwald .
7. Ապրսամ Արժունի .

և ուրիշ իշխաններ և նախարարներ :

Բայ աստի, ապստամբութեան մասնակից եկեղեցականները ձերբակալուեցան և արքունիք զրկուեցան :

1. Յովսէփ կաթողիկոս .
2. Դեռնոյ երէց Վանանցի .
3. Սամուէլ երէց .
4. Աքրսամ երէց Արածացի .
5. Սահակ եպսկ . Ռեսունեաց .
6. Մուշէ երէց Ալթակցի .
7. Արէն երէց Եղեգեցի .
8. Քաջաջ Սարկ . Ռեսունի :

Արքունիք կանչուեցաւ նաև Սիւնեաց տէրն Վասակ իշխանը, պաշտպանելու համար ինքզինքը :

Կալանաւոր նախարարները և եկեղեցականները արքունիք հասնելով, Միհրնեսին կողմէն հարցաքննուեցան : Յազկերտ փափաք յայտնեց որ բոլորը իրեն ներկայանան : Մեծ ատենին ներկայ եղան բոլոր Արիք և Անարիք, Պարսիկ աւագանին, մոզերը և Պարսից զենին առաջնորդները : Յազկերտ անձամբ հարցաքննեց նախարարները և անոնց բերնէն ուզեց հասկնալ թէ՛ ինչո՞ւ համար համարձակած էին ապստամբիլ իր իշխանութեան դէմ : Ամբաստանեալ բոլոր նախարարներն ալ լռեցին : Յազկերտ կրկնեց իր հարցումը : Ասոր վրայ Յազկերտէն խնդրեցին որ հրաման տայ իրենց նշանակել մէկը որ պատասխան տայ անոր իրենց կողմէն : Արշաւիր Կամսարական իր կողմէն խօսեցաւ իր ջատագովական պաշտպանութիւնը համարձակութեամբ եռանդով և ներգաշնակ : Իր ջատագովականին մէջ, Արշաւիր Կամսարական ցոյց կուտայ թէ՛ Վասակ Սիւնին էր որ պատճառ դարձաւ այս բոլորին և Յազկերտին ցոյց կուտայ գրուած նամակներուն պատճենները Ուր գրեալք և կնքեալք ի միջի են, որպէս ձեր արդարութիւնդ խնդրէ, աւելորդ բանից և շատխօսութեան պէտք անդ ոչ են :

Ատենը Վասակ Սիւնին պատասխանատու նկատեց և զայն դատապարտեց, պատիւէն և աստիճանի փառքերէն զրկեց զայն : Վասնզի՝ Վասակ, Սիւնեաց աշխարհին տանուտէրութիւնը ստանալու համար, իր Վաղինակ հօրեղբայրը նենգութեամբ և

խորամանկութեամբ սպաննել տուած էր : Եղիշէի համաձայն, Վասակ Սիւնին ի տես այս կացութեան, կը լռէ, կը պապանձի « Պապանձեցաւ ամենին, և չգտաւ բան ճշմարտութեան ի բերան նորաս : Եղիշէն դժոխք կ'իջեցնէ զայն : Նոյնիակ անոր զերեմանին տեղն ալ յայտնի չըլլար, վասն զի, ան, ըստ Եղիշէին « Իբրեւ զչուս մեռաւ և իբրեւ զգէշ քարեցաւ » : Արդէն, Եղիշէն իր այս Ողբերգութեան զիրքը կը գրէ « վասն նորա (Վասակին) առ ի կշտամբումն յանդիմանութիւն մեղաց նորա . զի ամենայն որ զայս լուեալ զիտացէ նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող մեղաց նորա » : Ահա, այսպիսի ստորին վախճան մը ունեցած էր Վասակ Սիւնին, որ՝ Հայոց աշխարհին թագաւոր ըլլալ կ'ուզէր : Եւ Եղիշէ, անէծք կարգաւով Վասակի սեաթոյր յիշատակին կը վերջացնէ իր դիւցազներգութիւն — պատմութիւնը : Վասակին դատապարտութենէն վերջը, Սիւնեաց տանուտէրութիւնը յանձնուեցաւ իր փեսին Վարազվադանի, որ Պարսկաստան փախած էր և Միհրնեսին հետ մտերմացած ըլլալով Պարսկական զենը ընդունած էր և հոն իր աներէն հալածական փախստական կ'ապրէր :

Փարպեցիին համաձայն, դատուելու համար Տիգրան գացող յանցապարտ նախարարներուն թիւը 31 գրուած է, իսկ ըստ Եղիշէի անոնց թիւ 35 է (Է. Յեղ.) : Անոնց անուններն ալ մի առ մի յիշուած են :

Սիւնեաց տոհմէն 2 հոգի՝ Բարգէն և Բակուր եղբայրներ. Արծրունեաց տոհմէն 7 հոգի՝ Ներշապուհ, Շաւասպ, Շնգին, Մհերուժան, Պարգե, Տաճատ, և Ապրսամ. Մամիկոնեանց տոհմէն 4 հոգի, Համաղասպեան, Համաղասպ, Արտաւազդ և Մուշեղ. Կամսարական տոհմէն 5 հոգի, Արշաւիր, Թաթուլ, Վարձ, Ներսէս և Աշոտ. Ամատունեաց տոհմէն 3 հոգի՝ Վահան, Առանձար և Առնակ. Դիմաքսեանց տոհմէն 2 հոգի՝ Թաթուլ և Սադոյ և 2 ուրիշներ ևս որոնց անունները չեն յիշուած. Անձեացեաց տոհմէն 3 հոգի՝ Շմաւոն, Զուարէն և Առաւան. Առաւելեանց տոհմէն 3 հոգի՝ Փափագ, Վարազդէն և Դատ. Մանգակունեաց տոհմէն 2 հոգի՝ Սահակ և Փարսման. Ռոփսեանց տոհմէն 2 հոգի՝ Բարիկ և Յոհան. Ռշտունեաց տոհմէն Վրէն, Գրնունեաց տոհմէն՝ Աստմ :

Եղիշէն 35 անուններ կը յիշէ, ըստ վերև յիշուած անուններուն, իսկ Փարպեցին 31 անուններ կը յիշատակէ, Փարպեցիին մէջ հետեւեալ 4 անունները չեն յիշուած, 1. Մհրուժան Արծրունի, 2. Ներսէս Կամսարական, 3. Աշոտ Կամսարական և 4. Զուարէն Անձևացի:

Եթէ երբեք Դիմաքսեանց տոհմէն առանց անունի յիշուած երկու հոգիներն ալ թիւի տակ անցնենք, Տիգրոն գացող Հայ նախարարներուն թիւը 37 կ'ըլլայ: Տիգրոն գացող Հայ նախարարներէն շատերը Աւարայրի ճակատամարտին մասնակցողներէն էին: Տիգրոն գացող Հայ նախարարները, Եղիշէի վկայութեամբ «ամենեքին սոքա կամօք մատնեցան ի սուրբ կապանս չարչարանացն» (Ը. Յեղ. էջ 378): Տիգրոն գացող Հայ նախարարներուն հետ, քանի մը նախարարազուն տղաքներ ալ, իբրև պատանդ Պարսկաստան ղրկուեցան, անոնցմէ յանուանէ կը յիշուին նահատակ Համայեակ Մամիկոնեանի զաւակները, Վահան, Վասակ և Արտաշէս (Փար. 111), Արշաւր Կամսարականի զաւակները, Ներսէս և Հրահատ և ուրիշներ (Փար. 112):

Փարպեցին և Եղիշէն Տիգրոնի մէջ տեղի ունեցած դատական գործողութիւնները ընդարձակօրէն պատմած են, սակայն և այնպէս կէտ առ կէտ իրարու չեն համապատասխաներ, Միհրնեբսէ հազարապետ ի վերջոյ մրրկելով և զայրանալով իր թոյնը և մաղձը թափեց հրամայելով որ երանելիները շղթաներով ծեծեն, և ապա հրամայեց որ շղթայակապ բանտարկուին մինչև որ անոնց մասին արքունական վճիռ մը արձակուի: Եկեղեցականներէն վերջ, նախարարներն ալ թուով 37 խիստ քննութեան և դատաւարութեան ենթարկուեցան: Միհրնեբսէ անձամբ վարեց դատաւարութիւնը իբրև ըմբոստ և արքունի հրովարտակները անարգողներ: Վասակի դատաւարութեանէն վերջ, 8 եկեղեցականները և 37 նախարարները Վրկան աքսորուեցան, այժմու Մազանդարան գաւառը, կապանքով և հրակողութեան ենթարկուելով: Եկեղեցականներուն և նախարարներուն աքսորը տեղի ունեցաւ 452 տարուոյ սկիզբները և անոնց բանտարկութիւնը տևեց 2 տարի, մինչև 454 տարուոյ ամառը:

Ը. Յեղանակը, որ ըստ ինքեան յաւելուած մը կ'երեւի Եղիշէի միւս եօթը Յեղանակներուն, ամենէն ընդարձակն է, նիւթը հետաքրքրական է և երեք մասերու կը բաժնուի: Այստեղ, մոգութեան կամ Մազդեզական զենին հինգ կէշտերուն անունները կան յիշատակուած: Ա. Համակղենը, պարսից կրօնքը ամբողջութեամբ զիտցողը, հմուտն է: Բ. Ամբարտաքաշը, կրօնական խնդիրներով զբաղողը: Գ. Բողպայիտը, գիրք մըն է Պարսից մոգերուն կրօնքին յատուկ: Իսկ Դ. և Ե. Պահլաւիկ և Պարսկադին, Պարսից Օրէնքը և Պարսից կրօնական պաշտամունքին գիրքը: Իսկ ասոնցմէ վերջը կուգար Մոգպետը: Յազկերտ իր թագաւորութեան 16րդ տարին, երբ Բուշանաց դէմ պատերազմելու կ'երթար, Վրկանէն անցած ատին, հրամայեց որ բանտարկեալ եկեղեցականները իր ետեւէն բերեն, ապա՝ բոլորը մէկ Ապար՝ այժմու Խորասան գաւառէն տարուելով Նիւշապուհ բերդին մէջ պահուեցան: Դատաւարտեալ 8 եկեղեցականներէն երկու հոգի, որոնք Արտաշատի ատրուշանը աւերողներն էին, Սամուէլ երէց և Արրահամ Սարկաւազ, անոնցմէ զատեցին և բանակին հետ միասին տարին: Բուշանաց Պատերազմը անյաջող անցաւ, Յազկերտ խիստ ազդուեցաւ այս ձախողութենէն և մոգերը կը մեղադրէր թէ, արժանապէս չէին պաշտած աստուածները: Միհրնեբսէ խորհրդակցութեամբ մոգերուն, Յազկերտին յայտնեց թէ՝ իրօք աստուածները բարկացած են իրենց, վասնզի՝ զեռ կենդանի կը պահէ անոնք՝ որ աստուածները սպաննելու ելած էին: Յազկերտ արքան հրամայեց զխատել բանակին մէջ գտնուողները, իսկ Նիւշապուհ բերդին մէջ գտնուողներուն համար ալ, մասնաւոր դատաւոր նշանակուեցաւ Դենշապուհ, իրեն օգնական տրուեցաւ Զնիկան մարզպետը և Մովան հանդերձապետը: Եկեղեցականներուն վրայ իբրև վերահսկիչ դրուած Մոգպետը քրիստոնեայ դարձաւ ի մեծ զայթակողութիւն Պարսից: Դենշապուհի զլխաւորութեամբ 6 եկեղեցականներն ալ չարաչար տանջանքներով նահատակուեցան, Յազկերտի թագաւորութեան 16րդ տարին, 454ին Հրոտից ամառւան 25ին: Նահատակները որ Ղևոնդեանց անունով ծանօթ են հետևեալներն են.

1. Ռոստոմեաց Սանակ եպիսկոպոս .
2. Հոդոյմեցի (Վայոց Ձոր) Յովսէփ կաթողիկոս .
3. Ղեւոնդ երեց, Վանանդեցի .
4. Մաւէ երեց, Աղբակեցի .
5. Արեւն երեց, Բագրեւանդացի .
6. Քաջաջ Սարկաւազ :

Պուժաստանցի խուժիկ մը որ դադանի քրիստոնեայ եղած էր Սրբոց մասունքները կը բերէ «Սա երկրորդեաց մեղ զամենայն կարգաւ»։ Պուժիկին տուած մանրամասն վկայութեանց և տեղեկութեանց վրայ եղիչէն Ը. Յեղանակին առջևի մասը յօրինած է «Դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն»։

Ը. Յեղանակին մէջ կը յիշուին նաև Ռորէն և Աբրահամ խոստովանող, այս երկուքը Ասորեստան աքսորուեցան, արքունական մշակութիւն կատարելու համար։ Երկուքն ալ տեսակ տեսակ և դառն չարչարանքներու ենթարկուեցան, Ռորէն վախճանեցաւ, կլիմային և նեղութեանց չկրնալով դիմանալ «Վասնզի՝ յոյժ խստագոյնս պահէին ի քերամջ աշխարհին, և անդադար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ. ընդ Մեղոյն և ընդ Քաջկար և ընդ ամենայն Ասորեստան և Պուժաստան, սաստիկ տապով հարեալ, ի խորշակէ մեռանէր սուրբն Ռորէն, և աւանդեալ լինէր, ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վկայսն»։ Իսկ 12 տարիներ վերջ, Աբրահամ հայրենիք վերադարձաւ «եկն եմուտ յաշխարհն Հայոց»։ Ը. Յեղանակին վերջին մասին մէջ, եղիչէն, աքսորուած նախարարներու մասին կը խօսի, որ 9 տարի և 6 ամիս կը տեւէ անոնց աքսորը։ Յազկերտ արքային մահը վրայ կը հասնի, իր թագաւորութեան 19րդ տարին։ Յազկերտ արքային երկու որդիները, իրենց հօր գահը ժառանգելու համար, սկսան իրարու հետ պատերազմիլ որ 2 տարի տեւած է։ Այս իսկ պատճառաւ, բանտարկուած և աքսորուած նախարարներուն ազատ արձակուիլը ուշացաւ։ Պերոզ իր հօրը Յազկերտին յաջորդեց։ Աքսորուած նախարարներէն ոմանք Պերոզ արքային թագաւորութեան 5րդ տարին արձակուեցան և ազատուեցան, ասոնց մասին եղիչէն կ'ըսէ «Բայց ի տեղի այսր դարձեալ գալ պիտի»։ Բաց աստի, եղիչէն նախարարներէն մօտ 500-ին, յականէ անուանէ ճանչցած ըլլալը կը յիշատակէ «Ձի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ, ոչ որ միայն

աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կըրտսերագունաց անտի» (Ը. Յեղ.)։

Հայոց աշխարհին փափկասուն տիկինները զարմանալի համբերութիւն և կարողցոյց տուած են, ինչպէս կը գրէ եղիչէն «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ զրգեալք և գգուեալք էին յերաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս ազօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտւալք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենեկին զսովորական փափկութիւնն։ Սեպեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասնզի ցերեկ արեակէղք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք։ Սաղմօսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն»։

Հայաստանի խոտաշունչ ձմեռները իւրարու կը յաջորդեն, կուգայ գարունը, սակայն իրենց սիրելիները կ'ուշանան «Բագում ձմեռաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդային կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Մաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչօք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց։ Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ամին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա, բագում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա» (Ը. Յեղ.)։ Պատմութեան շարունակութիւնը կը մնայ անաւարտ, երբ կ'ըսէ եղիչէն «Բայց ի տեղի այսր փնձ դարձեալ գալ պիտի»։ Հակառակ իր խոստմանը, եղիչէն զանց ըրած է յիշատակել, աքսորուած նախարարներուն վերադարձը, որ Պերոզ արքային 6րդ տարին, 462-ին տեղի ունեցաւ։ Աքսորուած նախարարներուն թիւը տուինք, ըստ արքունական հրամանին,

անոնք բոլորն ալ իրենց ստացուածքները ստացան և տանուտէրութիւնը վարել ըստ նախընթացի:

Արդեօք կարելի՞ է, ներքին փաստ կամ ապացոյց նկատել, եղիշէին լուսթիւնը քսորեալ նախարարներուն վերադարձին ոչ-յիշատակութիւնը իր գրքին մէջ, եղիշէին զրուսթեան թուականը ճշդելու համար, որ է 462էն առաջ գրուած նկատել իր պատմութիւն-դիւցազներգութիւնը: Բաց աստի, եղիշէին իր առջև ունի ուրիշ աղբիւրներ, ոմանք մեզի անծանօթ, որոնցմէ լիւսէի կ'օգտուի իր պատմութիւն-դիւցազներգութիւնը, իր «Ոսկեմատեան»ը գրելու տեան . . .

* * *

Վարդանանց Պատերազմը (451), որուն 1500-ամեայ Յորելեանին առթիւ, 1951 տարին Յորելեանական Տարի հռչակուած է, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գէորգ Զ. Վեհափառ Հայրապետին 1 Յունիս 1950 թուակիր հայրապետական սրբատառ կոնդակովը, իրր Աւարայրի հերոսական ճակատամարտի և Ղեւոնդեանց նահատակութեան 1500-ամեակի համազգային-եկեղեցական տօն», Հայոց ազգային և կրօնական պատմութեան մէջ մեր առաջին կրօնական և ազգային մեծ պատերազմը եղած էր ընդդէմ Պարսից Տէրութեան, իսկ երկրորդ կրօնական և ազգային մեծ պատերազմը եղած էր, Վահանեանց պատերազմը ընդդէմ Պարսից տէրութեան, որ նուիրագործուեցաւ Նըւարսակի դաշնագրովը (484-ին): Երկու մեծ պատերազմներուն մէջն ալ, Մամիկոնեանց տոհմին քաջածնունդ զօրավարներուն վիճակեցան պատերազմները զեկավարել: Մամիկոնեանները, մեր ազատատենջ ժողովուրդին ամենէն իմաստուն, ամենէն հանճարեղ և ամենէն ասպետական ու հերոսածին զօրավարներն ու զինուորականներն եղան, որոնք՝ սուր և խաչ ի ձեռնին կուռեցան և պատերազմեցան Պարսիկներուն դէմ յանուն ազատութեան, յանուն հայրենիքի և յանուն Ս. Եկեղեցւոյ փրկութեան, պաշտպանութեան և ազատագրութեան: Մամիկոնեան տոհմի զօրավարներուն և զինուորականներուն նշանաբանը

եղաւ, ազդ, հայրենիք և կրօնք և այս երեք սրբութիւններու համար անոնք պատերազմեցան, նահատակուեցան և տնամահացան Հայոց կրօնա-ազգային պատմութեան մէջ:

Բասքալ, Ֆրանսացի մեծ և հանճարեղ իմաստասէր փիլիսոփան ըսած է «L'homme passe infiniment l'homme», «Մարդը անհունօրէն կը գերազանցէ զմարդ»: Արդարեւ, մարդուն մէջ մարդէն աւելի բան մը կայ:

Վարդանանք և Ղեւոնդեանք, անհունօրէն գերազանցեցին և գերազուցեցին իրենք զիրենք: Մարդը, միշտ և շարունակ աւելի է ինքնիրմէն: Ան՝ բան մը աւելի կ'ընէ: Ան՝ աւելիին կը ցանկայ, աւելիով կը կատարէ և աւելիով վերջ կուտայ իր կեանքին: Եւ այդ աւելին, մարդուն ներաշխարհին մէջ վեր բարձրանալու, վեր կենալու, աւելին ընելու և կատարելու և աւելին ըլլալու ցանկութիւնն ու փափաքն է:

Վարդանանք և Ղեւոնդեանք աւելին ըրին, աւելիով կուռեցան և պատերազմեցան և աւելիով նահատակուեցան և վերջապէս աւելիով հերոսացան, սուրբեր, հերոսներ և քաջեր եղան իրենց քաջածնունդ ժողովուրդին պէս: Վարդանանց Պատերազմին պատմութիւնը, պարզ և սովորաբար մին պատմութիւնը, պարզ և սովորաբար պատմութիւն մը պատմութիւնը չէ կան պատերազմի մը պատմութիւնը և ինքնին, այլ՝ հերոսութեան, սրբութեան և հանճարեղ առաքինութեան, իրենք զիրենք գերազանցելու և աշակերտելու պատմութիւնն է: Անոնք՝ լուսածնունդ և հանճարեղ ժողովուրդի մը, առիւծասիրտ, անվեհեր ու քաջակորով զօրավարները և զինուորականներն եղան, որոնք Աւարայրի Պատերազմին մէջ ինկան ու նահատակուեցան քաջարար և հերոսաբար . . .

Վարդանանց և Ղեւոնդեանց փառքը և անոնց խնկանուէր և սուրբ յիշատակը, բազմաթիւ դարերէ ի վեր վառ կը մնայ բովանդակ Հայութեան մէջ, և այս տարի բովանդակ Հայութեան բարձրագոյն հրամանով և հայրապետական բարձրագոյն կը տօնենք մասնաւոր կարգադրութեամբ կը տօնենք անոնց՝ Աւարայրի Պատերազմին, Վարդանանց և Ղեւոնդեանց նահատակութեանց 1500-ամեակը: Քաջն Վարդանի և իրեն հետ նահատակուող Հայ քաջարի և անվեհեր զօրավարաց և զօրաց մեծ հմայքը մեր զօրավարաց և զօրաց մէջ միշտ խանամբողջ Հայ ժողովուրդին մէջ միշտ խանգավառ, միշտ վառ և միշտ խնկելի մնա-

ցած է և պիտի մնայ: Անոնք երանելի ու խնկելի և հերոսածին սուրբեր են, վեր ժամանակէն և միջոցէն և անոնցմէ իւրաքանչիւրը կարմիր վարդանէն սկսեալ կենդանի հերոսներ են իւրաքանչիւր Հայ հոգիին համար: Քաջն վարդան Մամիկոնեանին և իրեն հետ նահատակուող ընկերներուն յիշատակը կը մնայ միշտ վառ, խանդավառող և հոգեցունց, չի տժգունիր անվեհեր և քաջամարտիկ Մամիկոնեան զօրավարին դէմքը ժամանակի մաշեցնող մշուշին ներքեւ: Քաջն վարդան «իր կարմիր արիւնով պսակեց Ս. Եկեղեցին»: Արդեօք, սրբազան խնեթութիւն մըն էր իրենց կատարածը... ո՛չ, վասնզի՝ անոնք համոզուածով, զիտակցութեամբ պայքարեցան և նահատակուեցան և զիւանագիտական հաշիւներ հոն տեղ չգտան ամենևին:

Քաջն վարդան արհամարհեց և մէկդի նետեց բոլոր հաշիւները, բոլոր նկատումները և ան՝ Աւարայրի Պատերազմին մէջ փրկեց Հայութիւնը, մեր հաւատքը և կրօնքը:

Վարդանանք և Ղևոնդեանք մօտ են բոլոր Հայ սրտերուն և անոնց յիշատակը անմահ է և յաւիտենական: Ով որ վարդանը կը սիրէ, կը սիրէ ազատութիւնը և Հայոց պատմութեան թատերաբեմին վրայ Հայերը սիրած են վարդանը, կը սիրեն վարդանը և պիտի սիրեն զայն ընդ երկար և յաւիտեան: Ոչ մէկ Հայ կրնայ ուրանալ անոր և անոնց կատարած մեծ գործը, վասնզի՝ անոնք ազատութեան, կրօնքի, խղճի և հայրենիքի փրկութեան, ազատագրութեան և տեականութեան համար, պայքարեցան, ինկան, դէմ կեցան Սասանեանց բռնապետական ուժին առջև: Հայոց հետապնդած նպատակները յաջողութեամբ պսակուեցան, Քաջն վարդան Մամիկոնեանին եղբորորդի, Քաջն վահան Մամիկոնեանին կողմէն 484-ին Նուարսակի դաշինքով: Նուարսակի դաշինքը, վարդանանց զօրավարաց արիւնովը կնքուեցաւ և նըւիրագործուեցաւ:

Անոնք քաջաբար, առանց տատամսումի ըսին Յազկերտին, արքայից արքային «Եթէ մեզի այս հաւատքով թողուն, քու տեղդ ոչ երկրի վրայ ուրիշ տէր կը փոխանակենք և ոչ ալ երկնքին մէջ Յիսուս Քրիստոսի տեղ Աստուած կը փոխա-

նակենք, քանի որ անկէց զատ ուրիշ Աստուած չկայ» (Բ. Յեղանակ):

* * *

Վարդանանք և Ղևոնդեանք, իրաւամբ և ճշմարտութեամբ մերժեցին արեւապատութիւնը, չուզեցին ենթարկուիլ կրակին պաշտամունքին, քաջ գիտնալով որ՝ կրակին պաշտօն մատուցանելով պիտի մոխրանային առյաւէտ:

Անոնք, Աստուծոյ միածին Որդւոյն և մարդացեալ Աստուծոյ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ ծառաները և երկրպագուները եղան, և ո՛չ թէ «ծառայք արեգական»: Անոնք եղան հաւատքի, կրօնքի, հայրենիքի հերոսներ, սուրբեր և տիտաններ ու ախոյեաններ: Փառք և պատիւ Սրբոց վարդանանց զօրավարացն մերոց և Ղևոնդեանց սրբազնագործ քահանայիցն մերոց և բիւրօրհնութիւն իրենց անմահական և յաւերժական յիշատակին: Աղօթենք և մաղթենք որ, Տէրը՝ որ տէրն է կենդանեաց և մեռելոց՝ անշարժ և հաստատուն պահէ Հայոց Ս. Եկեղեցին և լուսոյ խորան Ս. Էջմիածինը և անոր Գահակալին Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Զ. Հայրապետին պարգեւէ արեւատութիւն և երկար կեանք ի Տեառնէ, թող Տէրը պահէ ու պահպանէ Հայոց ժողովուրդը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի ի շինութեան, ի լուսաւորութեան և ի պայծառութեան «Բարեխօսութեամբ վերին քո զօրաց՝ միշտ անշարժ պահեալ Աթոռ Հայկազնայս» ամէն:

ՊԱՐԳԵԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

(Շառունակեի՝ 10)

